ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/107 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով օդորակիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 19.10.2022թ. ժամը 12:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սվետա Սահակյան

Հանձնաժողովի անդամ՝ Էլինար Ավետիսյան
Հարություն Բարղության

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ
2	«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ
3	«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ		«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ		«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	3480000	2350000	2820000	2375000	2850000	3999999	4799998.80

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

4.1 «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.3 Հակադարձ աճուրդի արդյունքում «ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ-ի հայտը համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնահատման արդյունքների մասին

6.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Սվետա Սահակյան /նախագահ/

_____ Էլինար Ավետիսյան

_____ Հարություն Բարղության

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/